Արձանագրություն N 3

<<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23.08.2018թ.
Ժամը 12:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սարգսյանց
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մարտիրոսյան
Ա. Քոչարյան
Վ. Առաքելյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Վասիլյան
Բացակայում էր՝
Հանձնաժողովի անդամ՝ Կ. Երիցյան

1. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Ա. Սարգսյանց)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 03.07.2018թ. հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով *<<ֆինանսական միջոցներ>>* որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև *<<Ֆինանսական միջոցներ>>* որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 03.07.2018թ. ծանուցվել է Մասնակցին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ուսումնասիրվեին փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (09.07.2018թ. դրությամբ) ներկայացվել են հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնց մասին 19.07.2018թ. Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում (20.07.2018թ. դրությամբ) որպես անհամապատասխանությունների շտկում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքները ներկայացվում են ստորև.

Հ/Հ	Արձանագրված անհամապատասխանության նկարագրություն	Արձանագրված անհամապատասխանության ուղղում
1.	Մասնակիցը Հավելված 5.1-ով ներկայացրել է Բետոնամղիչ հատուկ (SCANIA P 380 CB, պ/h 366 AL 61, 2010թ.), սակայն նշված չէ հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:	Մասնակիցը կրկին ներկայացրել է 01.02.2018թ. կնքված Ծառայությունների մատուցման (վարձակալության) պայմանագիրը՝ 1.1 կետում ավելացնելով <<գործարանային 50 մ երկարությամբ խողովակով>> արտահայտությունը, իսկ նույն պայմանագրի 7.1 կետով սահմանվում է, որ պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
2.	Հավելված 5.2-ում <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի>> արտահայտության փոխարեն գրված է <<ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց ընթացակարգի>> արտահայտությունը:	Հավելված 5.2-ում ընթացակարգի ծածկագիրը չի ուղղվել:
3.	Մասնակցի կողմից ներկայացվել է Հավելված 5.2-ում նշված աշխատակից Վաչագան Գևորգյանի կողմից 22.06.2018թ. ստորագրված համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր) առ այն, որ վերջինս համաձայն է ներգրավվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով բաց մրցույթի Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներում: Նույն Վաչագան Գևորգյանը 18.07.2018թ. գնահատող հանձնաժողովին ներկայացրել է գրություն (կցվում է) այն մասին, որ Համաձայնագիրը ստորագրել է՝ տեղյակ չլինելով, որ մրցույթի հրավերով սահմանված է, որ ճարտարագետ-շինարար, քաղաքաշինության բնագավառում փորձագետ-կոնստրուկտորի որակավորում ունեցող մասնագետի ամենօրյա ներկայությունը շինհրապարակում պարտադիր պայման է: Հաշվի առնելով հրավերով սահմանված պահանջը՝ Վաչագան Գևորգյանը գնահատող հանձնաժողովին խնդրել է Համաձայնագիրը առոչինչ համարել: Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում Վաչագան Գևորգյանի գրության վերաբերյալ և ապահովել հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը:	Պատասխան գրությամբ Մասնակիցը չի պարզաբանել Վաչագան Գևորգյանի գրությունը՝ փոխարենը նշելով, որ վերջինս առողջական խնդիրների պատճառով չի կարող ամեն օր ներկա գտնվել շինհրապարակում: Հրավերի 1-ին մասի 2.5 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջը բավարարելու համար ներկայացվել է մեկ այլ աշխատակցի տվյալներ, որն ըստ Հավելված 5.2-ի հանդիսանում է <<Գազկոմշին>> ՍՊԸ-ի աշխատակից, իսկ ըստ ստորագրած համաձայնագրի՝ <<Սեյսմնախագիծ>> ՍՊԸ-ի փորձագետ-կոնստրուկտոր: Միևնույն ժամանակ ներկայացված չէ հրավերով պահանջվող փորձագետ-կոնստրուկտորի որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը:

4.	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.03.2017թ. կնքված N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 պայմանագրի մասով դուրս գրված երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:	Մասնակցի կողմից ներկայացվել են երկկողմանի ստորագրված հարկային հաշիվները և աշխատանքների հանձման-ընդունման արձանագրությունները: Ըստ պայմանագրի 1.3 կետի՝ աշխատանքների 50%-ի (շուրջ 23 100 000 ՀՀ դրամ) կատարման ժամկետ է սահմանվում պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 75-րդ օրացուցային օրը, սակայն ըստ ներկայացված հանձման-ընդունման արձանագրությունների՝ սահմանված ժամկետում ներկայացվել են միայն 4 862 650 ՀՀ դրամի աշխատանքներ (21.05%): Նշված 50% աշխատանքների մնացած մասը՝ 18 237 350 (23 100 000 - 4 862 650) ՀՀ դրամի չափով կատարվել են սահմանված ժամկետի խախտումներով:
5.	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 17.11.2017թ. կնքված N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 պայմանագրի 8.11 կետով նշված պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:	Մասնակցի կողմից ներկայացվել են հավելվածներ 4-ի և 4.1-ի օրինակելի ձևերը:
6.	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 27.03.2017թ. կնքված N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:	Մասնակցի կողմից ներկայացվել է ավարտված շինարարական օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի հաստատած ակտը:
7.	Մասնակցի ներկայացրած 25.02.2016թ. կնքված N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 ծածկագրով պայմանագրի մասով 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշիվը հաստատված է միակողմանի:	Մասնակցի կողմից ներկայացվել է 28.04.2017թ. դուրս գրված Ա0507949701 հարկային հաշվի երկկողմանի հաստատած օրինակը:
8.	Բացակայում են Մասնակցի ներկայացրած 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի 6.3 կետում նշված նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը:	Մասնակցի կողմից ներկայացված Ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է 23.09.2016թ. կնքված ենթակապալի պայմանագրի նախագծանախահաշվային փաստաթուղթը: Ներկայացված փոփոխված ծավալների վերաբերյալ ծավալաթերթ-նախահաշվից չի երևում, որ այն հանդիսանում է պայմանագրի 02.11.2016թ. կնքված փոփոխություն N 1-ով նախատեսված ավելացված գումարի մասով կատարվելիք աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, քանի որ վերջինիս վրա նշված է մեկ այլ պայմանագրի ծածկագիր:

1.2 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական փորձառություն,
2) տեխնիկական միջոցներ,
3) ֆինանսական միջոցներ,
4) աշխատանքային ռեսուրսներ:

1.3 Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ ներկայացված աղյուսակի

- 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը չի համապատասխանում *<<տեխնիկական միջոցներ>>* որակավորման չափանիշին,

- 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը չի համապատասխանում *<<աշխատանքային ռեսուրսներ>>* որակավորման չափանիշին,

- 4-րդ և 8-րդ կետերի համաձայն՝ նշված պայմանագրերը (N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/61 - 48 713 986 ՀՀ դրամ (ներառյալ 26.11.2017թ. կնքված Համաձայնագիր N2-ով ավելացված 2 514 070 ՀՀ դրամը) և Ենթակապալի պայմանագիր - 71 633 670 ՀՀ դրամ) չեն կարող գնահատվել որպես նախկինում պատշաճ կատարված պայմանագրեր: Մնացած պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ չի բավարարում Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվող հիսուն տոկոսի պահանջը, քանի որ Մասնակցի գնային առաջարկը 584 400 000 ՀՀ դրամ է, իսկ հրավերի պահանջներին բավարարող N ՀՀ ՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3, N ՏՄ-ԲԸԱՇՁԲ-17/01 և N ՀՀՀ-ԲԸԱՇՁԲ-16/2 պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 212 063 381.3 ՀՀ դրամ (30 229 319.9+20 400 006+161 434 055.4):

Ներկայացված պայմանագրերի շրջանակներում Մասնակիցը չի համապատասխանում *<<մասնագիտական փորձառություն>>* որակավորման չափանիշին:

1.4 Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի և գնահատման թերթիկների համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշում է Մասնակցի հայտը մերժել և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Կոմիտե ներկայացված հարցման և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Սարգսյանց)

2.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝

- 24.07.2018թ. հարցում է ուղարկվել Կոմիտե գնման ընթացակարգի հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Սնար>> ՍՊԸ-ի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի կոնսորցիումի (այսուհետ՝ Կոնսորցիում) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի՝ Կոնսորցիումը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց պարտավորություններ, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

- 24.07.2018թ. ծանուցվել է Կոնսորցիումին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղեկցող գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացնել հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որոնք Կարգի 32-րդ կետի 22-րդ ենթակետի համաձայն՝ պետք է ուսումնասիրվեին փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են (25.07.2018թ. դրությամբ) հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի բնօրինակը և (26.07.2018թ. դրությամբ) որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

բ) Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են հետևյալ անհահամապատասխանությունները,

1) Հավելված 5.1-ում նշված չէ 1-ին ինքնաթափի մակնիշը, 2-րդ ինքնաթափի մակնիշը և արտադրության տարեթիվը, ինչպես նաև նշված չէ բետոնամղիչի արտադրության տարեթիվը և հրավերով պահանջվող գործարանային 50 մ երկարությամբ խողովակի առկայության մասին:

2) Հավելված 5.2-ի աղյուսակով ներկայացված 1-ին աշխատակցի <<որակավորումը>> և աշխատանքային փորձի <<ժամանակահատվածը>> սյունակներում լրացված տեղեկությունները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

3) Բացակայում են ներկայացված 22.12.2014թ. կնքված ՀՀ/Դ-2/14 կապալի պայմանագրի 3.1 կետում նշված կողմերի համաձայնությամբ հաստատված նախահաշիվը (հավելված թիվ 1-ը), 14.07.2015թ. կնքված համաձայնագրում նշված թիվ 1.2 և 2.1 հավելվածները, 06.04.2016թ. կնքված համաձայնագրում նշված 1.3 և 2.2 հավելվածները և 23.08.2016թ. կնքված համաձայնագրում նշված 1.4 հավելվածը, իսկ պայմանագրի 4.3.2 կետում նշված Աշխատանքների կատարման ժամանակացույցը (հավելված թիվ 2-ը)՝ հաստատված է միակողմանի:

Նույն պայմանագրի շրջանակներում ներկայացված 1, 4, 5, 6, 7 ակտերը կնքված չեն պատվիրատուի կողմից:

գ) Կարգի 47-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունների մասին 31.07.2018թ. ծանուցվել է Կոնսորցիումին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք:

Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում (31.07.2018թ. դրությամբ) շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման գործընթացը կասեցնելու և հանձնաժողովի նիստը տեղափոխելու մասին

(Ա. Սարգսյանց)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 01.08.2018թ. ներկայացված գրությունը (<<Գազկոմշին>> ՍՊԸ-ի բողոքի վերաբերյալ) և ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետով՝ գնահատող հանձաժողովը 01.08.2018թ. նիստի արդյունքում որոշել է կասեցնել գնման գործընթացը, չեղյալ համարել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունների ուղղումը գնահատելու համար նշանակված նիստի օրվա (02.08.2018թ.) մասին N 3-3 արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և հաջորդ նիստը հրավիրել բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

4. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստը տեղափոխելու մասին

(Ա. Սարգսյանց)

4.1 Հաշվի առնելով, որ բողոքներ քննող անձի որոշումը ուժի մեջ է մտել 23.08.2018թ.՝ հանձնաժողովը որոշում է <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի 01.08.2018թ. N 3-4 արձանագրության 1.1 կետից հանել <<օրվան հաջորդող>> բառերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

5. <<ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Սարգսյանց)

5.1 Հիմք ընդունելով բողոքներ քննող անձի կողմից հրապարակված որոշումը (<<Գազկոմշին>> ՍՊԸ-ի բողոքը մերժելու մասին) և Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և ընտրված մասնակից ճանաչել <<Սնար>> ՍՊԸ-ի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ի կոնսորցիումին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

6. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Սարգսյանց)

6.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ պայմանագրի կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 5.1 կետում նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Սարգսյանց)

7.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Սարգսյանց

Անդամ՝ _____ Ն.Մարտիրոսյան

_____ Ա.Քոչարյան

_____ Վ.Առաքելյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ _____ Տ. Վասիլյան

ՀՀ ՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2

Ծածկագրով գնանշման հարցման

Ես, [illegible] [illegible] [illegible] ընկերության տնօրենս հայտնում եմ ի [illegible], որ 22.06.2018թ. ներկայացրել եմ հանձնաժողովին ՀՀ ՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով ծրագրի շրջանակներում [illegible] թիվ 22 [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] ծածկագրով ծրագրի [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]-[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] է:

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] եմ [illegible] [illegible] 22.06.2018թ. [illegible] հանձնաժողովին ՀՀ ՔՊԿ-ԲՄԱԾՁԲ-18/2 ծածկագրով:

[illegible] – [illegible] [signature] [illegible]